

ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ՊՈՂԱՐՅԱՆ

(Երուսաղեմ)

ՆՈՐԱԳՅՈՒՏ ՀԱՏՎԱԾ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի մատենադարանի 1419 թվականին ընդօրինակված № 1 հսկայակերտ Ճառընտիրին երկրորդ հատորին մեջ, էջ 720բ—728բ, հանդիպեցանք ընդարձակ հատվածի մը, առնված Ղազար Փարպեցիի Պատմութենեն, որ կներկայացնէ Առաջին գրվագին կեսն ավելին. Տփղիսի 1904 թվի տպագրութեան համաձայն էջ 12—28:

Այս նորագյուտ հատվածը մեծ արժեք կներկայացնէ՝ նկատելով որ այն գրի առնված է Փարպեցիի ծանոթ առաջին ձեռագրին երկու և կես դար առաջ:

Հատվածիս գրչութիւնը ուղղագրական տեսակետի ունի թերութիւններ և Ճառընտիրներու գրիչներուն հատուկ սովորութեան համաձայն կատարված են նաև գեղղումներ նշանակելի բանակութեամբ: Այնուհանդերձ հատվածս կպարունակէ բազմաթիւ ընթերցումներ, որոնց շնորհիւ Փարպեցիի բնագրին մեջ կկատարվին կարևոր սրբագրութիւններ: Ատոնց մեջ ամենեն նշանավորն է «հմուտ երգողական տառիցն» ասութեան փոխարեն ձեռագրիս տված ընթերցումը, «հմուտ բերթողական տառիցն»: Այս և ուրիշ սրբագրութեանց մասին ավելի ընդարձակ գրութիւն մը պատրաստած ենք արդեն:

Հատվածիս ընդօրինակութիւնը կատարեց օր. Արփինե Հ. Սրճունի՝ մեր առաջնորդութեամբ: Բնագրին ներս կատարեցինք շատ քիչ միջամտութիւն, կարգը մը սխալներ առնելով կոր փակագիծներու մեջ, և երբեմն ավելացնելով անհրաժեշտ բառեր անկյունավոր փակագիծներով:

Այս հատվածին առանձին հրատարակութեան նպատակն է ընծայել նպաստ մը Ղ. Փարպեցիի Պատմութեան բնագրի սրբագրութեան:

ՎԱՍՆ ՆՇԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՈՑ Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ
ՎՈՒՄՇԱՊՀՈՅ Ի ՁԵՌՆ ԽՆԳՐՈՅ ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՎՐԱՅ

Իսկ յետ ժամանակի ինչ անցանելոյ, բերեալ ատելութիւն նախարարացն Հայոց, որ ընդ Պարսից իշխանութեամբ էին, ընդ թագաւորին իւրեանց՝ Խոսրովու, վասն երթալոյ տակաւին և նուազելոյ թագաւորութեանն յազգէն Արշազունեաց, յաղաղս առաւելեալ ի նոսա գործոց իւրեանց շարեաց, ըստ բանի սուրբ քահանայապետիցն առաջնոցն ևւ ալլոց ևւս բազում առաքինի արանց, որք անլուր բերանովք բողոք բարձեալ յանդիմանէին զանարժան գործս նոցա, և զմատնումն ընդ լծով խիստ և անարէն ծառայութեանն Պարսից, նախատելով բարբառէին: Երթեալ այնուհետեւ առնէին բանսարկութիւն առ Շապհոյ արքային Պարսից, եթէ Խոսրով կարծեցուցանէ զինքն քեզ միամիտ սիրելի և

հնազանդ, և է այս ամենայն ցուցակութիւն նորա առ քեզ ատելութիւն և ոչ ստուգութիւն, բայց իւր ուխտ և խորհուրդ ընդ թագաւորին Յունաց է, և միշտ հրովարտակաւք, երթեւեկ պատգամաւորաւք, խաւսի ընդ նմա ի խաղաղութիւն. բայց դուք որպէս իմանայք հատուցանել նմա ըստ նորա խաբէութեանն զայն դուք իշխէք: Եւ կարծէին բանսարկութն չիւրեանց անմիտ խորհրդոցն կորուսանել զնա, և անձանց և աշխարհի բարոյ իմիք և շինութեան լինել պատճառ, և ոչ գիտէին եթէ տակաւին ի մաշումն և ի շար ծառայութեան վասն մեզաց իւրեանց մատնեալք լինէին յԱստուծոյ:

Իսկ զայն լուեալ խնդութեամբ և ախորժելով ունկնդրութեամբ Շապհոյ արքային Պարսից՝ հրաման տայր վազվազակի հրովարտակաւք զԽոսրով ի դուռն կոչել: Եւ նորա ոչ զգացեալ զբանսարկութիւնն Հայոց իշխանացն, վաղվազակի որպէս առ իւր իշխան և բարեկամ ի դուռն հասանէր: Եւ Շապհոյ թշնամանեալ զնա պատուհասէր. այլ թերեւ և վասն յաւժարութեան մերժել զնա ի թագաւորութենէն, և յանդիման կամեցեալ առնել զնա շարախաւսացն, վաղվազակի մերժեալ ընկենոյր զԽոսրով չիշխանութենէ թագաւորութեան իւրոյ, և ուխտէր այլ ոչ եւս տեսանել զաշխարհն Հայոց, անդ արգելեալ յաշխարհին Պարսից պահէր:

Իսկ իբրեւ մերժեալ լինէր Խոսրով ի թագաւորութենէն, խնդրէին Հայք ի Շապհոյ այլ թագաւոր իւրեանց. և նորա հաւանեալ թագաւորեցուցանէ նոցա զՎռամշապուհ զեղբայր նորին Խոսրովու, յազգէն Արշակունեաց և արձակէր ի Հայս:

Ի ժամանակս սորա թագաւորութեանն տուան շնորհք Հոգւոյն Սրբոյ յամենախնամէն Աստուծոյ, առն միտմ ճշմարտի Մեսրոբ անուն կոչեցեալ, որ էր ի գաւառէն Տարաւնոյ, ի Հացեկաց գեղջէ, որդի առն որում անուն էր Վարդան. ի տիս մանկութեան իւրում ուսեալ զգոյրութիւն յոյն, զինուորեալ ի դուռն Հայոց արքային Խոսրովու, կարգեալ յերամ մատեան արքային զպրացն, վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործս թագաւորացն արքունի զպիրքն, զվճոաց և զհրովարտակաց: Եւ սպասաւորեալ անդ ամս կարգաւորապէս առանց եպերանաց: Յետ այսորիկ տենչացեալ կարգի վանականութեան և երթեալ ի վանս բազմութեան եղբարց, և ընկալեալ ըզկերպարան վանականութեան, լինէր ընդիր յամենայնի երեւելի, հրաժարեալ յամենայն աշխարհագրաւս երկրաւոր զբազմանց: Ապա յանապատական կրանսն փոխեալ, և զարմանալի և երեւելի և հոշակաւոր, և կայր յանապատ, ի բազում տեղիս բարանձաւաց, մեծաւ առաքինութեամբ և խստամբեր վարուք, բազում և այլ կրանաւորք և աղաթասէր եղբարք: Մինչև յամն հինգերորդ արքային Հայոց Վռամշապհոյ, եղբար Խոսրովու: Եւ զայս եթէ որ կամեսցի զիտել հաւաստեալ ի պատմութենէ գրոց առն ցանկալոյ Կորեան, աշակերտի երանելոյն Մեսրոբայ, կարգացեալ տեղեկացի զվարս կենաց նորա, և զգիր Հայերէն նշանագրացն թէ երբ, և կամ յուր, և կամ յոյր ուրուք ի ձեռին գտան:

Եւ այսպէս բազմաժամանակեա զմտածութիւնս երանելոյ առն Մեսրոբայ ընկալեալ ամենախնամ մարդասիրին Աստուծոյ, զաւրացոյց զնա հոգով սղորմութեամբ իւրով: Քանզի հոգացեալ յարաժամ տրամէր երանելի այրն Աստուծոյ Մեսրովք, տեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թաւշակաւք, հեռազնաց ճանապարհաւք, և բազմաժամանակեա զեղերմամբ մաշէին զաւուրս իւրեանց ի զպրոց ասորի գիտութեանն: Քանզի պաշտանս եկեղեցոյ և կարգացմունք գրոց սրբոց ասորի

ուսմամբ վարէին ի վանաւրեայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց, յորմէ ոչ ինչ էին կարող լսել և աւետել ժողովուրդը այսպիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտանէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորոց: Զայս ի բազում ժամանակաց ըզմտաւ ածեալ երանելոյ առն Մեսրոբայ, և փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ լուեալ թէ զոյ նշանագիրք Հայերէն լեզուիս: Զաւրացեալ Սուրբ Հոգւոյն յորդորմամբ և եկեալ առ Սուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ, ղեկուցանէր և նմա զիւրոյ զբազմաժամանակեա մտածութեանն խնդիրս, և ընկալեալ ի նմանէ քաջալերութեան աւետիս, թէ զաւրացեալ պինդ կաց, առեալ ընդ քեզ այլ այրս աւգնականս ի քահանայից զոր ես հրամայեմ, և ուր տկարանայք ի հենգենայսն բերեալ առ իս ուղղեմ զայն, քանզի յոյժ զիւրին է գիւտ իրացդ զոր հայցեսդ: Բայց նախ արժան է մեզ սգացուցանել թագաւորին զպէտս այդպիսի մեծ և կարեւոր խնդրոյդ: Վասն որոյ յառաջ քան զաւուրս ինչ ոչ բազում, ճառեալ յեկեղեցւոյ յաղագս կարաւորութեան այդպիսոյ պիտոյից ասացեալ է ուրումն ցարքայ, թէ տեսի նշանագիրս Հայերէնս առ ումեմն եպիսկոպոսի ի գեաւղ միում, և թագաւորն յիշէ զասացեալսն, քանզի և ինձ նա պատմեաց:

Եւ մտեալ Սուրբ կաթողիկոսին Սահակայ հանդերձ երանելւան Մեսրոբբաւ առ թագաւորն Վաւառայուհ, և իմացուցեալ նմա զպէտս իրացն յիշեաց և ինքն արքայն ղխաւսեցեալսն վանականին վասն նորին իրաց ընդ նմա, զոր և նոցա պատմեալ ուրախացոյց: Եւ նոցա լուեալ զայս ի թագաւորէն փութացուցանէին ասելով, թէ ճեպեա յաղագս մեծ աւգտարեր աշխարհիս Հայոց գիւտի այսորիկ ի ժամանակս քո, որ շատ աւելի առ յապայսն բերէ քեզ յիշատակ անմոռաց և աւգուտ երկրաւոր վայելիցս, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո, և կամ որք յառաջ քան զքեզ քո նախնիքն էին յազգէն Արշակունեաց:

Եւ թագաւորին լուեալ զայս ետ փառս Աստուծոյ, և խնդալից եղեալ, որ ի ժամանակս թագաւորութեան նորա զայսպիսի հոգեւոր կենաց փափագ ժառանգեաց աշխարհս Հայոց:

Վաղվաղակի ստիպով ղեսպանս առաքեալ զՎահրիճ ոմն անուն կոչեցեալ ի ծնողաց իւրոց, հանդերձ հրովարտակաւ, առ այր մի երէց Հարել անուն, որոյ ասացեալ էր յառաջագոյն ցարքայն, որ և մերձաւորն էր առն բարէպաշտի Գանիէլ եպիսկոպոսի, առ որում նշանագիրք Հայերէնք կային: Եւ երանելոյն Հարելի ընկալեալ ղհրովարտակն ի Վահրճայ, և լուեալ ղ(դ)իրսն փութանակի հասանէր առ եպիսկոպոսն Գանիէլ: Եւ նախ անդէն ի նմին Գանիէլէ ինքն տեղեկանայր ղկարգ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առ թագաւորն և առ Սուրբ հայրապետն Հայոց Սահակ, և առ երանելին Մեսրոբ հասուցանէր: Իսկ արքայն Հայոց սուրբ հայրապետան Հայոց Սահակաւ և երանելւան Մեսրոբաւ, ընկալեալք ղնշանագիրսն ի Հարելէ ուրախ եղին:

Եւ այսպէս ղիպեալ գիւտի նշանագրացն, ձեռն ի զորժ արկանէր երանելին Մեսրոբը երիւրելով զնա Սուրբ հայրապետն Հայոց Սահակ, և ղիւրահնար ճանապարհ ցուցանելով կարգադրութեան գրեթոյն և հեղենային ուղղաձայնութեան, տալով նմա աւգնականս և այլ այրս բանիրունս և մտացիս ի քահանայիցն Հայոց, որք էին առ սակաւ մի, որպէս և երանելին Մեսրոբ, մերձաւորեալ յունարէն հեղենային, որում առաջնոյն անուն էր Յոհան, ի գաւառէն Եկեղեաց, և երկրորդին Յովսէփ, ի Պաղնայ տանէն, և եր(կ)րորդին Տէր ի Խորձենոյ, և շորրորդին Մուշէ ի Տարանոյ, որոց աւգնելովն զաւրէր Երանելին Մեսրոբը հանդիպեցուցանել ղհայերէն աթութայսն, ըստ կարգման սիղով-

բայիցն յունացն, ստէպ հարցմամբ և ուսանելով ի Սուրբ Կաթողիկոսէն Սահակայ, որ յոյժ աուցեալ վարժիւք անցուցանէր զբազում գիտնականաւքն յունաց, եղեալ կատարելապէս հմուտ քերթողական տառիցն և հետորական յորդասաց յայտարանութեանն, ևս առաւել տեղեակ լեալ փիլիսոփայական արհեստիցն:

Կարգեալ այնուհետև փրկչին առաջնորդութեամբ զգիր գրելոյն հայերէն զհնգենայիցն ուղղել յարինուածս, ցանգային կարգել զպրոցս և ուսուցանել բազմութիւն մանկտոյ. քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեանն, որպէս ի խաւարէ, յասորի տանջանացն զերծեալք, ի յոյս փութային: Բայց տարակուսեալք կասէին յանչութենէ զրոց սրբոց. քանզի զեռ եւս ոչ զօհէին հայերէն լսողութեամբ սուրբ կտակարանք եկեղեցոյ: Եւ երանելին Մեսրոբ և որ ընդ նմա պատուական քահանայք էին, ոչ զարէին համարձակել յայսպիսի սաստիկ և կարեւոր գործ, թարգմանել գիրս ի յոյն լեզուէն ի հայ բարբառս, վասն զի ոչինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգից յունական ուսմանն:

Ապա ժողովեալ ամենայն քահանայք աշխարհին Հայոց, հանդերձ երանելւան Մեսրոբու, և ամենայն նախարարք աշխարհիս Հայոց, և մեծամեծ տանուէրաւք առ թագաւորն Վառձապուհ, և հանդերձ թագաւորան սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Հայոց Սահակ արկանել զանձն յաշխատութիւն հոգեւոր, և թարգմանել զԱստուածաշունչ կտակարանս ի յոյն [լեզուոյ] ի հայ բարբառս. և առէին թէ որպէս սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ ի խոշտանգանս անվնաս աշով հզարին ի լուսաւորութիւն գիտութեան աշխարհիս Հայոց տուաւ պահել, շնորհեցաւ և քեզ նորուն շառաւելի, վիճակ պայծառութեան պաշտամանս այսորիկ, սկիզբն ուսման գործոյ մշակութեան, և լինել նմանող սուրբ նախնոյն քո, որ յանգիտութենէ ի ճշմարիտ Աստուածգիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց: Եւ արդ զու լնլով զպակասութիւն զայս, մնացեալ ի սուրբ նախնոյն քո, զոր պահեաց քեզ Աստուած, որ նմանեալ ճշգրտապէս արինակեցեր ի քեզ զվարս սուրբ հարն քո ներսէսի:

Եւ լուեալ զայս ամենայն՝ բարեացապարտ կաթողիկոսն Հայոց Սահակ ի թագաւորէն և յամենեցունց, զուարճացաւ յոգի իւր, փառաւորելով զփրկչին ամենեցուն զՏէր Յիսուս Քրիստոս: Եւ կամաւոր յաւժարութեամբ ևս զանձն իւր ի գործ, պանծացեալ Աստուծոյ ազնականութեամբն, և անվեհեր ջանալով զցայգ և զցերեկս՝ թարգմանէր զկտակարանս ամենայն, զխաւսեցեալս ճշմարիտ մարգարէիւք Սուրբ Հոգւոյն, և զհաստատեալս և զկնքեալս երջանիկ առաքելաւք զնորոց կտակարանաց զլուսաւոր և զկենսատու քարոզութիւն նովին [Հոգւով]:

Եւ տարեալ ի գլուխ սրբոյ Հայրապետին Սահակայ զգործ մեծ հոգեւոր վաստակոյն, կարգեցան վաղվաղակի զպրոցք հայերէն ուսմանն. բազմացան դասք զրշացն, ելեւելս առնելով զմիմեամբք. զարդարեցան պաշտամունք եկեղեցոյ, յորդորեցան բազմութիւնք ժողովրդոց արանց և կանանց ի տանս փրկչին և ի ժողովս մարտիրոսաց սբայծառացան եկեղեցիք, շուք առին վկայարանք սրբոց: Եւ զի միանգամայն սասցից ըստ բանի Սուրբ Մարգարէին Եսայեա, թէ լցաւ երկիր ամենայն Հայոց գիտութեամբ Տեառն ի հոգեւոր վաստակոց սրբոյ հայրապետին Սահակայ, և շնորհիւ ամենախնամ փրկչին Քրիստոսի, կատարեալ այս ամենայն ի ժամանակս Վառձապուհոյ, ըստ յառաջագոյն գրելոյն, և լուսաւորեալ աշխարհս Հայոց՝ եկաց յետ այսորիկ թա-

գաւորն Վոսմշապու՛ճ ամս բազումս, և հասեալ չերկար ծերութիւն վախճանեցաւ յանկողնի իւրում խաղաղական հանգստիւ յաշխարհիս Հայոց, յիշատակ նորա արճնութեամբ:

Յետոյ մեռաւ Շապու՛ճ արքայն Պարսից, և թագաւորեաց Վոսմ որդի նորա, որ էր Կրմանճ արքայ, յորմէ խնդրեցին Հայք իւրեանց թագաւոր զնոյն միւս անգամ զԽոսրով զեղբայր Վոսմշապու՛ճոյ, զոր յառաջնումն բանսարկութեամբ ետուն մերժել զնա Հայք Շապու՛ճոյ Արքային Պարսից ի թագաւորութենէն Հայոց: Եւ նորա կատարեալ զխնդիրս նոցա թագաւորեցայնէ նոցա զԽոսրով, զայր յոյժ ծերացեալ: Եւ եկեալ Խոսրով յաշխարհս Հայոց, և կեցեալ ամիս ութ վաղխճանեցաւ:

Եւ եկեալ իշխանք աշխարհին Հայոց առաջի Վոսմայ Արքային Պարսից, խնդրեցին իւրեանց թագաւոր յազգէն Արշակունեաց և նա թագաւորեցոյց ի վերայ նոցա զԱրտաշէս զորդի Վոսմայշապու՛ճոյ, յազգէ թագաւորացն Հայոց:

Եւ էր Արտաշէս այր մանուկ և եղամու, և բազում անառակութեամբ վարէր զթագաւորութիւնն: Եւ շկարացեալ այսպիսի զիզխ և մուրկան վարուց թագաւորին Արտաշէսի տանել նախարարացն Հայոց, ժողովեցան միահամուռ ամենեքեան առ մեծ քահանայապետն Հայոց Սահակ, որ էր յազգէն պարթեւաց, որդի սրբոյն Ներսէսի, և ասեն ցնա. ոչ եւս կարեմք այսպիսի անարէն և պիղծ գործոց թագաւորին համբերել. վանս զի լաւ համարիմք մեռանել քան զայսպիսի գործ աղտեղութեան տեսանել և լսել հանապազար: Արդ քեզ նախ պարտ է այսպիսի անճնարին աղէտից խնդրել հնարս, և բառնալ ի միջոյ զայնպիսի ամբարշտեալ թագաւոր:

Եւ լուեալ զայսպիսի բանս սրբոյն Սահակայ ի նախարարացն Հայոց, պատասխանի տուեալ ասէր. իբրու թէ ոչ նոր ինչ լսելով այսաւր ի ձենչ ճանաչեմ զասացեալսդ ձեր, այլ զիտեմ, զի զկծեալ սրտիւք խաւսիք զայսպիսի խաւսս: Բայց արդ որպիսի հնարիւք ըստ արժանի ճոզեոր մարդկան զելս իրացդ գտանել մարթասցուք, զայն արժան է խորհել և առնել ամենեցուն:

Եւ նոցա առ հասարակ պատասխանի տուեալ ասեն ցտորք կաթուղիկոսն Հայոց Սահակ թէ մեք ամենեքեան և ոչ մի ինչ ելս և հնարս իրացդ գտանել մարթասցուք: Բայց բողոքել թագաւորին Պարսից և ի բաց բառնալ զգայ ի թագաւորութենէ այդի, որում ոչ եղև արժանի ժառանգելոյ. այլ մեզ քան զայդ ոչ իմանալ ինչ է, և ոչ առնել: Եւ զքեզ աղաչեմք միաբանել ընդ մեզ այսմ խորհրդոյ:

Իսկ սուրբ և ճոզեոր կաթուղիկոսն Հայոց Սահակ, իբրև լսէր զայս ամենայն ի նախարարացն Հայոց, և ստուգիւ ճանաչէր, եթէ ի նոյն միտս և ի նոյն խորհուրդս հաստատեալ են բաւանդակ աւագանի աշխարհին Հայոց, ի մեծ տրամութիւն և յանմխիթար սուգ ընկղմեալ լինէր. և զեղեալ արտասուաց վտակս առաջի բազմութեան նախարարացն Հայոց, հրաժարէր առնել պատասխանի բանից նոցա մինչև ցաւուրս բազումս: Եւ արգելեալ զինքն ի սենեակ, ողբոց միայն և արտասուաց լսէին ձայնք, մերձեալք ի դուրս սենեկին. քանզի տեսանող ախամբ ի զաւրութենէ սուրբ Հոգւոյն հայէր այրն Աստուծոյ, ի սպառ սպուռ կործանումն աշխարհիս Հայոց: Իսկ զհետ բազում ատուրց համարձակեալք ոմանք յեպիսկոպոսացն, որք հանապաղ պարապէին առ դուրս սրբոյն, շկարացեալք և առ վայր մի տուեալ յառատարուղիս և ի շնորհալից վարդապետութենէ առն Աստուծոյ, և այլք ի պատուական երիցանց և ի սարկաւագացն, որք ի նորին սուրբ ուխտէ հայրապետին էին, և ոմանք յազատ ազա-

տայնոյն համարձակեալք մտանէին ի ներքս, և խառնէին ընդ նմա բանիւք ողորանաց: Ընդ որս սփոփեալ սակաւ մի սուրբ հայրապետն ըստ հոգևոր գիտութեան և խրատու, զոր միացեալ ունէր լինեան ի մանկութենէ իւրմէ, լուեալ դադարէր առ վայր մի:

Իսկ յետ բազում աւուրց ժողովեալ դարձեալ առ նա ամէն ազատագունդ աշխարհին Հայոց, և զնոյն բանս երկրորդեալ առաջի կաթողիկոսին Սահակայ, խնդրէին ստիպով ի նմանէ և զնորա միաբանութիւնն ընդ ինքեանս: Իսկ իրրեւ տեսանէր սուրբն, թէ ոչ ինչ են կասեալք յառաջին կամացն և խորհրդոցն, վասն զի ար ըստ արէ յաւելուած աղտեղի գործոց թագաւորին առաւել քան զառաւել աճեցուցանէր զկորստեան անձին իւրոյ զմիաբանութիւն իշխանացն, ձայն բարձեալ մեծաձայն ողբալով ասէ ցամենեանն առհասարակ. եթէ ես, ասէի, եթէ դուք իսկ, որպէս ուսեալք յԱստուծոյ խորհիւք հոգևորապէս և տարեալ վայր մի թերութեան առն, և արտասուաւք թախանձեցուցանել զամէնողորմն Փրկիչն մեր, զՏէր Յիսուս Քրիստոս, յաղագս գիւտի կորուսելոյն խնդրել հնարս. զի ըստ առաջանին ծնընդեանն, թէպէտ և մեղաւոր է, սակայն եղբայր և մարմին մեր է. յիշելով զվարդապետութիւն առաքելոյն Պաւղոսի, զի եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան և ամենայն անդամքն ընդ նմա. և եթէ փառաւորի մի անդամն, խնդան ամենայն անդամքն ընդ նմա: Յիշել պարտ է և զմտաւ ածել զվիշտան և զնեղութիւնան, զբանդ և զկապանս սրբոյն Գրիգորի, զպաղատանսն և զաղաթան, զոր վասն ամենայն աշխարհիս փրկութեան խնդրել յԱստուծոյ եղիտ: Եւ (զ)ձեզ ըստ նմին արինակի պարտ է ի վերայ մեղուցեալ անդամոյն խնդրել զթողութիւն, և ոչ անարինաց մատնել ի ծաղր, և յայպանումն տալ զսուրբ խորհուրդ հաւատոյս մերոյ:

Յիշեցէք զսուրբ հայրն իմ և զձեր վարդապետն, և զփոխեալն լանասնական բնութեան կերպարանս, հառաչանաւք և անդադար խնդրուածովք զցայգ և զցերեկ, ածել ի գութ զամենեցունց արարիչն Քրիստոս՝ ի նոյն հաստատեաց ի մարդկային բնութիւնս: Եւ դուք աշակերտք նորին հոգևոր վարդապետին էք, եթէ բոլորով սրախ խնդրիցէք յԱստուծոյ ամենեքեան, և շերմ հաւատով հառաչեցէք և անթերի յուսով, զամենայն հայցուածս կատարէ Ապտուած:

Այլ վասն իմ որ ասէքդ, եթէ միաբանեա ընդ մեզ, ինձ քաւ լիցի մատնիչ լինել ճշմարիտ հաւատոցն մերոց, և անհաւատից զիմ մոլորեալ ոչխարն մատնել յայպանումն: Զի թէպէտ և մեղաւոր է՝ այլ դրոշմեալ է Սուրբ Աւագանին ծնընդեամբ, հմուտ է փրկութեան խորհրդոյն, լուեալ է զքարոզութիւն աւետարանին կենաց: Զի թէ էր հաւատացեալ թագաւորի առաջի տանել զայսպիսի յանդիմանութիւն՝ թերեւ համարձակէի յուսով գիւտի կորուսելոյն, այլ կշտամբել զհաւատացեալ առաջի անհաւատից ոչ հաւանիմ, այլ ինձ քաւ լիցի մեռանել, քան թէ զոր ի հաւատացելոց՝ վասն անարժան գործոց մատնել անարինաց: Զի թէպէտ և իցի պոռնիկ, այլ զկնիք հաւտին Քրիստոսի կրէ լանձին իւրում, գիշացեալ ասէք մարմնով, այլ ոչ անհաւատ և հեթանոս, զեղխեալ է՝ այլ ոչ կրակապաշտ. տկարացեալ է ի կանայս՝ այլ ոչ ծառայէ տարերց. միով ախտանայ ցաւով՝ այլ ոչ վարակեալ ամենայն ախտիւք իրրեւ զամբարիշտ: Եւ զի՛արդ զսակաւամեղն ամբարշտելոցն մատնել խորհիցիք ի սատակումն: Քաւ լիցի ձեզ որդիք, մի՛ խորհիք զխորհուրդդ զայդ, և զքնիկ զձեր զտեարան, որպէս սմանք ի ձեր նախնեացն, կորուսանել մի շանայք:

Չայս, եւ առաւել քան զսոյն բանս և զխրատս, բազում աղերսիւ և արտասուաբ խաւսեցեալ անձանձրոյթ Սուրբ կաթողիկոսին Սահակայ ընդ աւագանին Հայոց, ոչինչ կարաց զնոսա յառաջին միաբանութենէն և ի խորհրդոյն, զոր հաստատեալ էին ի միտս իւրեանց, ի բաց դարձուցանել: Քանզի եկեալ հասեալ էր ի վերա նոցա նզովք սրբոյ առն Աստուծոյ ներսէսի՝ ի զլուխ զգործն հանէր: Միաբանութեամբ պատասխանի արարեալ ամենեցուն քահանայապետին սրբոյն Սահակայ և ասեն. փոխանակ զի ոչ լուար բանից մերոց, և ի միաբանութենէս մերմէ զանձն քո ի բաց դարձուցեր, զիտասջիր, զի որպէս եղեալ ի մտի շթագաւորել նմա եւս ի վերա մեր, շանամք զքահանայանալ և ոչ քեզ առ յերկարսն ի վերայ աշխարհիս մերում: Եւ զայս այսպէս ասացեալ ամենայն աւագ տանուտէրաց աշխարհիս առաջի սրբոյ հայրապետին Սահակայ՝ ելին զայրագնեալք ի խրատուէ սրբոյն, և այլ ոչ եւս կամեցան դռնալ առ երանելի հայրապետն. զի էր զնոսա շրջափակեալ և պաշարեալ անիծից երանելոյ քահանայապետին սրբոյն ներսէսի:

Եւ այնուհետեւ միաբանեալ զնացին ի դուռն արքային Պարսից, և երթեալք անդ յանդիման եղեն թագաւորին Պարսից Վռամայ, ընդ որս էր և երէց մի Սորմակ անուն, ի գաւառէն Բզնունեաց, ի գեղջէ որ կոչի Արձկէ, ի տոհմէ քահանայից գաւառին մեկուսանայր, որոյ միաբանեալ ընդ նախարարսն Հայոց, ճեղքեալ ի խրատուէ սրբոյ հայրապետին Սահակայ խաւսէր զբանս [անհանձարս] և առաւել աղտեղիս քան զամենայն նախարարսն Հայոց զթագաւորէն Արտաշէսէ առաջի աւագորհրոյն Պարսից. շնորհ առնելով նախարարացն Հայոց, յազագս խոստանալոյ նմա ոմանց յաւագանոյն Հայոց զաթոռ կաթողիկոսութեան աշխարհիս Հայոց: Եւ ծանուցեալ նախագոյն զպատճառս տրանջելոյն իւրեանց Սուրենայ և այլ աւագանոյն Պարսից. քանզի Սուրենան Պալհաւ՝ էր ի ժամանակին յայնմիկ հաղարապետ ի դրան արքունի. և հանդերձ նովաւ և այլ մեծամեծաբ դրանն հասուցին զբան ամբաստանութեան առ Վռամ արքայն Պարսից:

Եւ լուեալ արքային զայսպիսի բողոք յազատանոյն Հայոց՝ ոչ թոյլ տայր նոցա խաւսել առ վայր մի առանց գալոյ ոտիսին ի դուռն: Վազվաղակի դեսպանս արձակէր զթագաւորէն Հայոց Արտաշէսէ առ ինքն ճեպով գալ հրամայէր. գալ ընդ նմա գրէր մեծի քահանայապետին Սահակայ:

Եւ եկեալ նոցա ի դուռն հարցանէր նախ առանձինն արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրտաշէս, թէ զինչ են իրքդ, յազագս որոյ ամբաստանեն զքէն նախարարքդ Հայոց: Եւ նորա պատասխանեալ ասէր, թէ ամենեկն ոչ գիտեմ զինչ խաւսինդ և շարախաւսեն դորա զինչն. այլ որպէս սովոր են ի բնէ թշնամանիլ զտեսարս իւրեանց՝ քստ նմին աւրինակի և այժմ [կամին] կատարել զչար կամաց իւրեանց զխնդրիս. քանզի միշտ իշխանափոխք լինալ են և տիրատեացք: Եւ թագաւորն արեաց Վռամ հրաման տայր միայն ընդ միայն կոչել առ ինքն զսուրբ կաթողիկոսն Հայոց զՏէր Սահակ. քանզի մեծարէր զնա, նախ, վասն տոհմականութեան առն, և դարձեալ՝ զի առաջի անհաւատիցն յարգոյ և պատուական ցուցանէ զսուրբ ծառայս իւր Տէր: Եւ հարցեալ ցերանելի կաթողիկոսն կամէր լսել ի նմանէ զնմանս բանիցն շարախաւսացն թագաւորին Հայոց: Իսկ նորա պատասխանեալ ասէր. եթէ ոչ գիտեմ զինչ խաւսին նորա զնմանէ. նոքա իսկ ասասցեն, և դուք լուարուք ի նոցանէն. և որպէս ասեն առաջի ձեր յանձինս իւրեանց ընդունին զհատուցումն. զիս ինչ յայդպիսի խըն-

դիրս բանից մի հարցանէք. զի ոչինչ լսելոց էք յինէն յազագս շարախաւսութեանդ այդորիկ շար և կամ բարի:

Ապա կոչէր առ ինքն թագաւորն զՍուրեանն Պալհաւ, զիւր զհազարապետըն, որ ազգական և տոհմակից էր մեծի քահանայապետին Սահակայ, որպէսզի միաբանեալ և նորա ընդ այլ նախարարսն Հայոց վկայեսցէ շարախաւսութեան նոցա, և պատուեալ բազում պարգևաւք և մեծապէս շքեղութեամբ դարձցի յիշխանութիւն կաթողիկոսութեան իւրոյ աշխարհն: Եւ Սուրենայ բերեալ զպատգամս արքայի առ երանելին Սահակ խոստանայր նմա ըստ ասացուածին Վոսմա, և շքեղութիւն մեծ գտանել ի թագաւորէն, թէ հաւանեալ] ասէ. կամաց նորա [տացես վկայութիւն] նախարարացն Հայոց՝ մեծարեալ բազում պատուաւք դառնաս յիշխանութիւն քո. ապա եթէ այլազգագոյնս ինչ խորհիս յամտեալ և զքո կաթողիկոսութեան տունն կորուսանէս ի քէն, և յիշխանութենէդ զոր ունիս մերժեալ լինիս. և վասն զի ազգակից քո եմ և զբարին քո կամիմ, և ոչ զթեթեութիւն, քանզի և տամ քեզ սիրով զայսպիսի խրատ: Եւ այսպիսի բանիւք ջանայր հաւանեցուցանել զսուրբ հայրապետն Սահակ: Քանզի կամէին ի միջոյ բառնալ զթագաւորութիւնն Հայոց:

Իսկ սուրբն և բնաւ իսկ յանձն ոչ առնոյր այսպիսի բանից տալ վկայութիւն իշխանացն Հայոց, այլ հաստատեալ ի միտս ասէր, եթէ ես զԱրտաշէսէ այնպիսի ինչ վատթարութիւն իսկ ոչ գիտեմ, որով արժան է ի ձէնդ դատելոյ և անարգանաց. զի թէպէտ և ըստ սրբասէր մերոյ արինացն անարգանաց արժանի է և անգոսնելոյ, այլ ըստ հրամանի ձեր ազտեղասէր արինացդ գովութեան արժանի է և մեծարանաց:

Եւ լուեալ զայս պատասխանի Սուրենայ ի մեծ հայրապետէն Հայոց Սահակայ յիւրմէ տոհմակցէն, և պատմեալ թագաւորին արեաց՝ ի ցասումն զայրացման զրգոեալ թագաւորն՝ հրաման տայր այնուհետեւ բազմամբոխ ատենին հարցանել զնախարարսն Հայոց և զԱրտաշէս: Եւ կուտեալ իշխանացն Հայոց բազում աղտեղարանութիւն և ազգի ազգի խաւս անարժանութեան ի թագաւորն իւրեանց. քանզի ոչ եթէ զեղեալսն և եթ ի նմա զիրսն խաւսէին այլ եւս յաւելուածովք ըստ արինի թշնամութեան կուտէին ի վերայ նորա բազում վնասս, որ թէպէտ և յուրաստ եղեալ Արտաշէսի, թէ չէ այդպէս, ոչ հաւատային լսողքն, եղեալ զկամս իւրեանց բառնալ ի միջոյ զթագաւորութիւնն յԱրշակունեաց ազգէն. մանաւանդ զի լուաւ եւս թագաւորն արեաց ամենայն աւագանով զրանն ի դատախազացն Արտաշէսէ, թէ բնաւ զի իսկ պիտոյ է մեզ թագաւոր. այլ իշխան սրարսիկ ըստ ժամանակի եկեալ վերակացու լիցի մեզ, որ զիրաքանչիւր ուրուք ի մէնջ ծանուցեալ զհպատակութիւն և զանհպատակութիւն ցուցցէ ձեզ]:

[Եւ լուեալ զայս Վոսմայ] հանգերձ աւագանով զրանն՝ յոյժ [ուրախանայր] և այնուհետեւ հրաման տայր վաղվազակի ի բաց առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշէսէ. ընդ նմին և դառնն կաթողիկոսութեանն ի սրբոյն Սահակայ (և) յարբունիս ունել, փոխանակ զի ոչ միաբանեցաւ տալ վկայութիւն ընդ նախարարսն Հայոց: Եւ այսպէս վճարեալ հրաման թագաւորին Պարսից ի զլուխ ելանէր: Եւ յայնմհետէ բարձաւ թագաւորութիւնն յազգէն Արշակունեաց ի վնցերրորդ ամին Արտաշէսի, ըստ բանի երանելոյ առն Աստուծոյ մեծի քահանայապետին Ներսէսի, և անկաւ աշխարհս ընդ լծով շար ծառայութեան անաւրէն իշխանութեանն Պարսից: Եւ առեալ զինս իշխանացն Հայոց ի թագաւորէն Պարսից ընդ մատնութեան Արտաշէսի, պատիւս և մեծութիւնս, նման արժաթոյն զոր

առին ընդ Յովսէփայ եղբարքն, ընդ մատնութեանն յիսմայելեաց ի վաճառականացն, և այսպէս հրաժարեալք ի դրանէ եկին յաշխարհն իւրեանց:

Եւ տանուտէրացն Հայոց, որոց խոստացեալ էին զկաթողիկոսութիւնն Սորմկայ Արձկէի երիցու, նստուցին զնա յաթոռ քահանայապետութեանն Հայոց: Յորում, յետ սակաւ ժամանակի ինչ անցելոյ, ընդդիմացեալ ոմանց ի զարաւոր իշխանացն Հայոց՝ մերժեցին յիշխանութենէ կաթողիկոսութեան: Եւ յայնմ՝ հետէ առաքեցաւ նախ ի Վռամայ արքայէն պարսից յաշխարհս Հայոց մարգպան պարսիկ. և յայնմ՝ հետէ եղեն [ի սպառ սպուռ] ընդ լծով ծառայութեան անարէն ազգին պարսից եւ կատարեալ ել ի գլուխ [բանն] անիծից մեծի քահանայապետին Ներսէսի, զոր յաղագս առաւելապէս աճեցեալ աւր քան զար ի թագաւորական տոհմին Արշակունի գործք անարէնութեան շարեացն, զոր կամակարութեամբ համարձակեալք միշտ գործէին անամօթեալք: Մանաւանդ յորժամ ետես սուրբն Ներսէս զմահն արդար, զոր հատուց Արշակ ի վերայ Գնելոյն եղբար որդոյն իւրոյ, և շկարացեալ հանդուրժել այնպիսի անարէն գործոց սուրբ այրն Աստուծոյ Ներսէս, գայրագնեալ սրտիւ, ըստ գրեցելոց ի պատմութեանն (ի պատմութեանն) երկրորդումն ճառին հնգէտասաներորդի, որ ասաց թէ փոխանակ զի յաճախեցեր ի շարիս մեծամեծս առաւել քան զհայրն քո Տիրան, և քան զայլ նախնիսն քո որք եղեն շարք եւ ամբարիշտք յազգէն Արշակունեաց, և ոչ նախանձեալ նմանեցեր լաւացն և առաքինի արանցն եղելոց ի տոհմին քում, որոց ժառանգեալ զսպառիս թագաւորութեանն հարցն իւրեանց առաւել եւս փութացան լինել ժառանգորդք բարի գործոց երկնից արքայութեանն. այլ աւր քան զար աճեցեալ ի քեզ առանց պատկառանաց զամենայն պղծութիւնս լցեալ կատարեցէր. ի վերայ ամենայնի այսորիկ գտար և պատճառ հեղման արդար արեան եղբարորդոյն քո Գնելոյ. արդ եղիցիս դու հեղեալ յերկիր իբրեւ զչոր լուալեաց, և ի լարել աղեղանց բարձրելոյն տկարասչիր: Եւ կործանումն, որ բերանով մարգարէին ասացաւ, հասեալ է ի վերայ ձերբմբել ազգիդ Արշակունեաց զյետին բաժակն և արբջիք և կործանեսչիք: Հանդերձ և այլեւս յաւելուածովք ծանր և ահագին, զոր ասացեալ է սրբոյ քահանայապետին ի վերայ ազգիդ Արշակունեաց:

Ինդրեցին այնուհետեւ իւրեանց կաթողիկոս յարքունուատ նախարարքն Հայոց, և թագաւորն Վռամ ետ նոցա զԲարդէշ զոմն անուն, այր Ասորի յազգէ, որ եկեալ յաշխարհս Հայոց իւրովք գաւառակցաւք, որք կէին լոյժ կրանիւք, եկեալքն ընդ նմա յԱսորեստանէ, ըստ սովորութեան իւրեանց աշխարհին տանտիկնայիւք. և ոչ կէին ըստ սուրբ և ամբիժ կրանիցն, զոր ուսուցեալ և կարգեալ է յեկեղեցիս Հայոց սրբոյ նահատակին Գրիգորի: Եւ տաղակացեալ մեծամեծ տանուտեարքն Հայոց և աւագ սեպուհք և ամենայն ժողովրդոցն բազմութիւնք ընդ վարս մարդկանն, որք եկեալ էին ընդ Բարդիշոյի, որք ոչ հաւասարեալ հանգոյն կրանից և վարուց հրեշտակակրան վարդապետութեան սրբոյ նահատակին Գրիգորի, որով վարժեալ զամենասեան ուսոյց և հաստատեաց ըստ կարգի վերին քաղաքավարութեան: Առաւել եւս սուգ առեալ հեծէին անմխիթար սրանշնչի քահանայք սուրբ եկեղեցւոյ, որ յառաքելոյ նման աշոյ հայրապետին Սահակայ ձեռնադրեալքն էին: Եւ շկարացեալ հանդուրժել առ ի յերկարսն այնպիսի զեղիս և անարժան կարգի՝ ի քահանայապետութենէն Հայոց խոտեալ մերժեցին զԲարդէշ, ծանուցանելով թագաւորին Վռամայ, եթէ ոչ են կարգք սորա և վարք ըստ կարգի մերոյ աշխարհիս ուսման. բայց սուր մեղ այլ առաջնորդ ըստ մերում բնիկ կարգիս, որ եղեալ վերակացու կալցի հաստատուն զկարգ

սուրբ եկեղեցույ: Եւ Վռամայ արքային հաւանեալ կամաց խնդրոյ նոցա՝ տայր նոցա առաջնորդ դարձեալ այլ ասորի, որում անուն էր Շմուէլ, որ եկեալ յաշխարհս Հայոց կայր և նա նոյնպէս լոյժ կրանիւք ըստ կարգին Քարդիշոյի, և սակաւ ինչ ժամանակս կեցեալ վախճանէր յաշխարհս Հայոց:

Վ Եւ տեսեալ ամենայն տանուտերց աշխարհիս Հայոց աւագ սեպհաց և բաւրեղակ բազմութեան ուխտէ եկեղեցույ, և ժողովրդոց ի միասին արանց և կանանց, զսուրբ և զանարատ և զառաքելաշնորհ վարդապետութիւն, զոր սերմանեալ ածեցոյց ի նոսա սուրբն Գրիգորիոս, և նորին զաւակքն, որք ուսուցին զճշմարիտ և զարդար ուսումն ամենայն լսողացն. որ զինքեանք նման երանելի առաքելոցն ընկալան, ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ յազդեցութենէ Սուրբ Հոգւոյն շնորհաց: Քանզի դարձեալ ժողովեցան միահամուռ և դիմեալ բուն հարկանէին զոտից Սրբոյ անն Աստուծոյ Սահակայ, աղերս թախանձանաց և բազմազեղ արտաւսր արկեալ առաջի ճշմարիտ բահանայապետին, և ասէին. մեղաք յերկինս և առաջի բո. թող մեզ մեղուցելոցս և ձեւացոյ զքեզ ըստ արինակի բարէպաշտ քաջ նահատակին Գրիգորի, նախնոյն բո, որ ոչ չիշեաց զայնչափ տանջանսն և զքերանսն, զոր անցուցին ընդ նա նախնիքն մեր. այլ նմանեալ արարչին ամենեցուն և հատուց բարի փոխարէնս փոխանակ շարեացն, զոր հասուցին ի վերայ նորա. և ծանուցեալ ամենեցուն հաւանելոց նմա վարս երկնաթուխս և ճանապարհս Աստուածագիտս, և ուսոյց ամենեցուն ասել հանապազ. թող մեզ զսլարտս մեր ըստ մեր թողոց մերոց սլարտապանաց:

Արդ եղեր և զու անդադար վարդապետ մեր սորին փառատրութեան, տպաւորեաց ի բո անձդ զնոյն համբերութեան արինակ, և թող մեզ զսլարտս մեր եւ ջանս եղեալ խնդրեմք ի դրանէ հաստատել զքեզ ի բնիկ հայրենի աթոռ կաթուղիկոսութեան սուրբ եկեղեցույ, յորմէ լուսաւորեալ տեսաք զայս անմատոյց արդարութեան արեղակն: Եւ մի խառնեցի պղտորումն ընդ յստակ և ականակիտ վարդապետութեան սրբոյ առաքելանման հայրապետին Գրիգորի. քանզի ահա դեռ թուլացեալ մեղկին լոյժ առաջնորդաց կնիք հաւատոյ անարատ քարոզութիւն սրբոյն, և ահա կորրնչիմք մեք և ծնեալքս ի մէնջ զյաւիտենական կորուստն:

Այսպէս և առաւել քան զսոյն քանս աղաչանաց խառնեցեալ միարանութեամբ ամենայն բազմութեանն ի բազում աւուրս ընդ սրբոյն ի տուէ և ի գիշերի անդադար ամենեին ոչ կարացեալ խոնարհեցուցանել զմիտս առն ճշմարտի ի բանս խանդադատականս պաղատանաց իւրեանց: Այլ խաղազական պատասխանատրութեամբ ասէր ցամենիսեան, եթէ ես ոչ ուսա յերկնաւոր արարչէն և ի վարդապետէն Քրիստոսէ բարկանալ ումեք, որ եւ ի խաչին յաղագս խաչահանուացն աղաչէր զհայր շհամարել նոցա զայն մեղս. որ և մեզ ցանկ բողոքէ ասելով. Աւրհնեցէք զհալածիշս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց: Այլ բահանայանալ ի վերայ տիրանենդ և տիրատպան և մատնիշ ժողովրդոց ոչ կարեմ. քանզի Սուրբ Հոգին, որ ծնուն զմեզ աւազանաւն ժառանգակիցս լինել Քրիստոսի, նոյն ասաց երկնաքաղաքացի արամքն Պաղոսի, թէ մի՛ դատիք, զի մի դատապարտեսցիք. և դուք որ կարող էք զտկարութիւն տկարացն բարձէք. և դարձեալ՝ թէ իմ են վրէժխնդրութիւնք, և ես հատուցից, ասէ Տէր: Արդ դուք ձեզէն եղէք վրէժխնդիր թագաւորին ձերոյ զործոցն, և դայրացեալք նմա զսուրբ հաւատ ուխտին մերոյ մատնեալ ծաղր ելաւք առնել անարինին: Եւ զիս ի՞ւ արդեաւք ջանայցէք մխիթարել, և կամ ում թախանձե-

ցուցանէր բահանւանալ, որ զվիրաւոր ոչխար հաւտին Քրիստոսի տեսանեմ ոչ պատել ձիթով, և գինով աւծեալ զվէրսն և եղեալ ի վերայ գրաստու, և տարեալ ի պանդոկոջն, այլ յաշեալ յանխնա [եւ] առաջի գիշակեր գազանացն բնկեցեալ յաւձտումն: Երթեալ յինէն ի բաց և թոյլ տուք ինձ սղբալ ընթանուք զկորուստ աշխարհիս Հայոց, զոր տեսանեմ աշաւք մտաց ի զարութենէ վերին ցուցակութեանն: Բազում անգամ ազաշեցին զսուրբն Սահակ զալ յաթոս հայրապետութեան իւրոյ և ասէ. մի՛ բանադատէք զիս ի վերայ բեկման ժողովրդեան իմոյ, վասն զանցս ազեաիս այսորիկ յառաջ բան զձեռնադրելն զիս յեպիսկոպոսութիւն եցոյց ինձ վերին կանխատեսութեանն գիտութիւնն յանուրջս, ըստ արինակի մարգարէական տեսութեանն, որ ցուցաւ սուրբ նահատակին Քրիզորի, ի գիտութիւն իրացն առ յապա եղելոցն: Զոր և ձեզ պատմել այսաւր բանադատիմ անն եղեալ սրտի իմոյ, և ցուցանիմ անզգամ, որպէս սուրբ առաքեալն Աստուծոյ Պաւղոս, յազագս սուտ առաքելոցն և անաւրէն մշակացն գրեաց պարծելով առ կորընթացիսն յիւր ճգնութեանցն հանդէսն:

Н. БОГАРЯН

(Иерусалим)

НОВООТКРЫТЫЙ ФРАГМЕНТ „ИСТОРИИ АРМЕНИИ“
ЛАЗАРЯ ПАРБЕЦИ

Р е з ю м е

Полный список „Истории Армении“ выдающегося историографа V века Лазаря Парбеци относится к XVII веку. Однако в Гомиллиарии хранилища манускриптов Иерусалимского Армянского патриархата (рукопись № 1), переписанной в 1419 году, нами обнаружен пространный отрывок из „Истории Армении“ Л. Парбеци, который соответствует 12—28 страницам научного издания 1904 года. Этот отрывок имеет интересные разночтения.

Данный фрагмент публикуется полностью в целях использования его разночтений при последующих изданиях текста „Истории“ Л. Парбеци.

N. BOGHARIAN

(Jérusalem)

UN FRAGMENT RECEMMENT DECOUVERT DE
„L'HISTOIRE D'ARMENIE“ DE LAZARE PARBETSI

„L'Histoire d'Arménie“ du célèbre historien du V^e siècle Lazare Parbétsi nous est parvenue dans un manuscrit datant du XVII^e siècle.

Il nous a été donné, récemment, de découvrir dans le Recueil d'Homélies, recopié en 1419 (ms no. 1 de la Bibliothèque des manuscrits du Patriarcat arménien de Jérusalem), un long fragment de l'ouvrage précité.

Ce fragment, qui présente d'intéressantes variantes, correspond aux pages 12—28 de l'édition critique de 1904.

Nous le publions intégralement aux fins d'utilisation de ces mêmes variantes dans les éditions ultérieures de „l'Histoire“ de Lazare Parbétsi.